

ՄԵՔԵՆԱՅԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՍԿՈ ՊԼՅՈՒՍ

ԿԱՍԿՈ-ն Ձեր մեքենայի ապահովագրությունն է՝ **գրեթե բոլոր հնարավոր պատահարներից**: Եթե բոլորին հայտնի ԱՊՊԱ պայմանագրով հատուցվում են միայն երրորդ անձանց պատճառված վնասները, ապա ԿԱՍԿՈ-ի միջոցով հատուցման են ենթակա **հենց Ձեր մեքենայի** վնասները: **ԿԱՍԿՈ ՊԼՅՈՒՍ** պրոդուկտը հնարավորություն է տալիս ապահովագրել համեմատաբար «հին» մեքենաները՝ բավականին մատչելի ապահովագրավճարով:

Ո՞Ր ՄԵՔԵՆԱՆԵՐՆ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ



- Մարդատար են,
- պատկանում են ֆիզիկական անձանց,
- արտադրվել են 20-ից մինչև 10 տարի առաջ,
- օգտագործվում են միայն անձնական նպատակով,
- գրավադրված չեն բանկում,
- մասսայական արտադրության են

(Օրինակ՝ հազվագյուտ ռետրո մեքենա չեն):

*Գրավադրված մեքենաների համար գործում են ԿԱՍԿՈ ապահովագրության այլ պայմաններ:

ՈՐՔԱՆ Ե ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ



- Ապահովագրավճարը կախված է տվյալ SU-ի և ապահովագրի համար ԱՊՊԱ-ով հաշվարկված ապահովագրավճարի մեծությունից, ինչպես նաև շարժիչի հզորությունից.

Շարժիչի հզորություն (ձ. ու.)	ԿԱՍԿՈ ապահովագրավճար
<= 80	ԱՊՊԱ ապահովագրավճար X 2
81 - 140	ԱՊՊԱ ապահովագրավճար X 2
141 - 230	ԱՊՊԱ ապահովագրավճար X 1.8
>= 231	ԱՊՊԱ ապահովագրավճար X 1.8

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ



- 23 տարեկանից բարձր, 3 տարվա վարորդական փորձ ունեցող վարորդները,
- 16-րդ ԲՄ դասից ցածր դաս ունեցող վարորդները: Պայմանագրում կարող է ընգրկվել առավելագույնը 4 վարորդ:

Լրավճարով հնարավոր է ներառել նաև 1-3 տարի վարորդական փորձառություն ունեցող մեկ անձի:

ՈՐՏԵՂ Ե ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



- << և Արցախում:
- Վրաստանի տարածք, տարվա ընթացքում միայն 30 օր:

Ապահովագրության ժամկետը կարող է 30 օր ներառել նաև Իրանը և ԱՊՀ երկրների տարածքները: Ծածկույթի այս ընդլայնումը հնարավոր է ընտրել ապահովագրության պայմանագրի կնքման պահին:

ՎՃԱՐՄԱՆ ԻՆՉ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԿԱՆ



- Միանվագ,
- կիսամյակային,
- եռամսյակային:

Կիսամյակային և եռամսյակային տարբերակների դեպքում գործում են լրավճարներ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ



- 1 Տարի

ԻՆՉ ՌԻՍԿԵՐԻՑ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ



- Ճանապարհատրանսպորտային պատահար (այդ թվում՝ կողաշրջում, բախում, և այլն),
 - հրդեհ, պայթյուն,
 - վայր ընկնող ծառերից, սյուներից և այլ առարկաներից փասսներ (նաև անիմների տակից թռչող քարերից),
 - կարկուտ, երկրաշարժ, ջրհեղեղ և այլ տարերային աղետներ,
 - կենդանիների գործողություններ:
- Ծածկույթի հնարավոր ընդլայնումներ**
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ,
 - գողություն, կողոպուտ, ավազակային հարձակում:

ԼՐԱՅՈՒՑԻՉ ՌԻՍԿԵՐ

- Ավտոբաղաբացիական պատասխանատվության կամավոր ապահովագրություն (ԱՊԿԱ),
- վարորդի և ուղևորների ապահովագրություն դժբախտ պատահարներից,
- մեքենայի շտապ օգնություն, մասնավորապես.



- շարժական վուլկանացում,
- վառելիքի առաքում,
- էլեկտրասնուցման կարգավորում (ակունուլյատորների լիցքավորում),
- էվակուացիա:

ՄԵՔԵՆԱՅԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՕՐԻՆԱԿ



- » Ապահովագրվող մեքենա – Toyota Corolla, 2006թ. արտադրության,
- » ապահովադրի Բոնուս Մալուս դաս – 6,
- » մեքենայի ծխաւժ - 190,
- » ԱՊՊԱ ապահովագրավճար – 46,000 ՀՀ դրամ:

ԿԱՍԿՈ տարեկան ապահովագրավճարը = 46,000 x 1.8 = 82,800 ՀՀ դրամ

Ի՞ՆՉ ՉԱՓՈՎ Է ԻՐԱԿԱՆՑՎՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- » Անկախ մեքենայի արժեքից՝ հատուցման առավելագույն գումարը կազմում է 1,500,000 ՀՀ դրամ:

Ի՞ՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՏԱՐԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- » Վթար տեղի ունենալու կամ վնաս նկատելու դեպքում անմիջապես կապ հաստատել **ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ**-յի հետ՝ **010 59 21 21** հեռախոսահամարով:
- » Մեքենան թողնել անշարժ և սպասել Ապահովագրողի ցուցումներին:
Ըստ ցուցումների՝ հնարավոր է առաջանա նաև ՃՈ կամ ԱԻՆ աշխատակիցների ներգրավման կարիք:

ՈՐՈ՛ՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ներկայացնել հայտային դիմում հետևյալ եղանակներից մեկով.
 - » online.ingoarmenia.am առցանց հարթակի միջոցով,
 - » ձեռքով լրացնելով հայտային դիմումը (ներբեռնելով այն www.ingoarmenia.am կայքից) և լրացված դիմումի լուսապատճենը կամ լուսանկարը ուղարկել dimum@ingoarmenia.am էլեկտրոնային հասցեին կամ VIBER հավելվածով՝ **+374 44 41 07 23** հեռախոսահամարին:
- հայտային դիմումում ընտրել հատուցման եղանակը.
 - » վերանորոգում լավագույն ավտոսպասարկման կենտրոններում,
 - » դրամային արտահայտությամբ հատուցման ստացում:
- Ներկայացնել այլ անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում.
 - » ապահովադրի և վարորդի անձնագիր, վարորդական վկայական,
 - » մեքենայի տեխ.անձնագիր,
 - » վնասի լուսանկարներ,
 - » ՃՈ եզրակացություն, ՃՈ վարչական վարույթի եզրակացություն, և այլն:
- Սպասել ապահովագրողի հետագա ցուցումներին:
ՈՒՇԱՐԴՈՒԹՅՈՒՆ – Հատուցման ընթացքին կարող եք հետևել <https://online.ingoarmenia.am/claim-status> հղմամբ:

Ի՞ՆՉ ՓԱՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ



- » Մեքենայի տեխ.անձնագիր,
- » սեփականատիրոջ և լիազորված վարորդների անձնագիր և սոցիալական քարտ (կամ ID),
- » վարորդների վարորդական վկայականներ,
- » առկայության դեպքում՝ մեքենայի շուկայական արժեքը հավաստող փաստաթուղթ:

ՈՒՇԱՐԴՈՒԹՅՈՒՆ – Նախքան պայմանագրի կնքումը Ապահովագրողը կատարում է մեքենայի զննություն, լուսա և տեսանկարահանում:

Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐԱԿՆՔԵԼՈՒ (ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ) ՀԱՄԱՐ

- » Եթե Դուք հանդիսանում եք **ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ**-յի հաճախորդը, ապա ապահովագրության պայմանագիրը վերակնքելու համար անհրաժեշտ է ներկայացնել միայն այն փաստաթղթերը, որոնցում տեղի են ունեցել փոփոխություններ:

ՄԵՔԵՆԱՅԻ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԿԱՍԿՈ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- » Մոտենալ ընկերության գրասենյակներից կամ վաճառքի կետերից մեկը,
- » զանգահարել 010 59 21 21 հեռախոսահամարով և հրավիրել մասնագետին Ձեզ հարմար վայր,
- » պատվիրել պայմանագիր մեր սոցիալական հարթակների միջոցով,
- » գրել մեր կայքի chat-ին,
- » ուղարկել էլեկտրոնային հաղորդագրություն՝ info@ingoarmenia.am էլեկտրոնային հասցեին: